ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԱԿ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

(ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՎ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՄԱՏԵՂ ԶԵԿՈՒՅՑ)

Կոնտակտային տվյալներ
Հելսինկյան քաղաքացիական
ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Արթուր Սաքունց
Հասցե՝ Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր,
Տիգրան Մեծի 59, 2001
Հեռ.՝ (+374 322) 4 22 68
Կայքէջ՝ www.hcav.am
Էլ. փոստ՝ hcav@hcav.am

Կոնտակտային տվյալներ
Խոշտանգումների դեմ
համաշխարհային
կազմակերպություն
Լաուր Էլմալեհ
Հասցե. P.O Box 21, 8 rue Vieux-Billard
1211 Ժնև 8 Շվեյցարիա
Հեռ. + 41 22 809 49 39
Կայքէջ՝ www.omct.org
Էլ. փոստ՝ omct@omct.org

2023

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը շնորհակալություն է հայտնում Շվեդիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալությանը, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամին և Սիգրիդ Ռոզինգ Թրասթին՝ այս հրապարակումը հնարավոր դարձնելու համար: Զեկույցում ներկայացված տեսակետներն ու վերլուծությունները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ համընկնեն նշված կազմակերպությունների տեսակետների և դիրքորոշումների հետ:

Խոշտանգումների դեմ համաշխարհային կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում Ժնև քաղաքին և Լիխտենշտեյնի կառավարությանը՝ այս հրապարակումը հնարավոր դարձնելու համար: Սույն հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես Խոշտանգումների դեմ միջազգային կազմակերպությունը և այն որևէ հանգամանքներում չի կարող մեկնաբանվել որպես Ժնև քաղաքի կամ Լիխտենշտեյնի կառավարության տեսակետների արտացոլում:

SUBVENTIONNÉ PAR LA VILLE DE GENÈVE
GOVERNMENT PRINCIPALITY OF LIECHTENSTEIN

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը իրավապաշտպան հասարակական կազմակերպություն է, որի գործունեությունը տարածվում է ՀՀ ամբողջ տարածքում: Կազմակերպության կանոնադրական նպատակներից է նպաստել յուրաքանչյուրի մարդու իրավունքների իրացմանը, խթանել օրենսդրական փոփոխություններ՝ համապատասխանեցնելու այն միջազգային սկզբունքներին և Հայաստանի ստանձնած պարտավորություններին, ջատագովել մարդու իրավունքների պաշտպանությունը:

Կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններից է մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մշտադիտարկումը փակ հաստատություններում, այդ թվում՝ երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող մանկատներում և ճգնաժամային կենտրոններում: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը նախագահում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ երեխաներին, տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող ՊՈԱԿ-ներում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդական խումբը (այսուհետ՝ Խնամքի հաստատություններում դիտորդական խումբ): Վերջինս մեծ ներդրում է ունեցել սույն զեկույցում ներկայացված տեղեկության հավաքագրման հարցում:

Խոշտանգումների դեմ համաշխարհային կազմակերպությունը աշխատում է 200 անդամ կազմակերպությունների հետ՝ վերջ դնելու խոշտանգումներին և վատ վերաբերմունքին, աջակցելու տուժողներին, և պաշտպանելու մարդու իրավունքների պաշտպաններին՝ անկախ նրանց գտնվելու վայրից: Միասին մենք համաշարհային ամենամեծ խումբն ենք, որն ակտիվ պայքարում է խոշտանգումների դեմ ավելի քան 90 երկրներում:Մենք աշխատում ենք՝ պաշտպանելու մեր հասարակությունների ամենախոցելի անդամներին, այդ թվում՝ կանանց, երեխաներին, բնիկ ժողովուրդներին, միգրանտներին և այլ մարգինալացված համայնքներին:

Բովանդակություն

Ներածություն 4

Ընդհանուր համատեքստ և իրավական շրջանակ 4

Մեթոդանաբություն 9

Անկախ մշտադիտարկումը 10

Ընդհանուր սկզբունքներ (Կոնվենցիայի հոդված 2, 3, 6 և 12) 11

Խտրականության դեմ պայքար 11

Բռնություն երեխաների նկատմամբ (Հոդված 19, 37(ա) և 39) 12

Վատ վերաբերմունք և մարմնական պատիժ 12

Ընտանեկան միջավայր և այլընտրանքային խնամք (Կոնվենցիայի հոդված 5, 18 (պարբ. 1-2), 9-11, 19-21, 25, 27 (պարբ. 4) և 39) 18

Ընտանեկան միջավայրից զրկված երեխաներ 18

Հաշմանդամություն, առողջություն և բարեկեցություն (հոդվածներ. 6, 18 (պարագրաֆ 3), 23, 24, 26, 27 (պարբերություններ 1-3) 20

Հաշմանդամություն ունեցող երեխաներ 20

Առողջապահություն և առողջապահական ծառայություններ 22

Կենսամակարդակ 24

Կրթություն, ժամանց և մշակութային գործունեություն (Կոնվենցիայի հոդված 28, 29 և 31) 25

Ներածություն

Սույն այլընտրանքային զեկույցը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման՝ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի վերանայմանն ընդառաջ: Այն հաջորդում է Հայաստանի հինգերորդ և վեցերորդ համատեղ պարբերական զեկույցի՝ 2020 թ.-ի ներկայացմանը:

Ընդհանուր համատեքստ և իրավական շրջանակ

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) միացել է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային 1993 թ. և մասնակից է մարդու իրավունքների հիմնական պայմանագրերին: ՀՀ-ն նաև վավերացրել է Երեխաների իրավունքների հարցերով կոմիտեի երրորդ կամընտիր՝ կոմունիկացիայի ընթացակարգի արձանագրությունը 2021 թ.: 2020 թ. մայիսի 11-ին վավերացվել է դեռևս 2010 թ. ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (հայտնի է նաև որպես Լանզարոտի կոնվենցիա):

Պետական մակարդակում երեխայի իրավունքները պաշտպանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, Ընտանեկան օրենսգրքով: Մինչև 2021 թ.-ը գործում էր Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագիրը, սակայն դրանից հետո նոր ռազմավարություն չի ընդունվել: Երեխաների իրավունքների պաշտպանության ենթաբաժին ունեն Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը:

Օրենսդրական որոշ կարգավորումներ շարունակում են հակասել ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի դրույթներին: Օրինակ՝ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, որպես lex specialis նորմեր պարունակող օրենսդրական ակտ, երաշխավորված չէ երեխայի լսված լինելու իրավունքն

առողջապահական ոլորտում, մասնավորապես՝ գաղտնի բժշկական խորհրդատվություն և այլ բժշկական ծառայություններ ստանալն առանց ծնողների համաձայնության: Նախատեսված չէ միայն երեխայի իրազեկված և կամավոր համաձայնության դեպքում բժշկական միջամտության հնարավորությունը՝ առանց ծնողների համաձայնության, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան:

ՀՀ ընտանեկան օրենսգրքում նախատեսված է ծնողական իրավունքների սահմանափակում այն դեպքում, երբ ծնողն անկարող է կատարել իր ծնողական պարտականությունները կամ վտանգում է երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջությունը և մտավոր զարգացումը՝ հոգեկան, մտավոր կամ նյարդային առողջության խնդիրներ ունենալու պատճառով:

Կանխարգելման և վաղ միջամտության համակարգը ժամանակին և պատշաճ չի արձագանքում, չունենք բավարար համայնքային սոցիալական աշխատողների ծածկույթ, բավարար ներուժ, գործողությունների հստակ ճանապարհային քարտեզ՝ կանխելու երեխաների մուտքը հաստատություններ:

Սույն զեկույցը ներկայացնում է երեխաների իրավունքների խախտումները, մասնավորապես անդրադառնալով հաստատություններում բնակվող երեխաների իրավունքներին: Զեկույցը ներկայացնում է երեխաների՝ խտրականությունից զերծ մնալու, վատ վերաբեմունքից և ֆիզիկական պատժից զերծ մնալու, երեխաների առողջության, երեխաների բավարար կենսամակարդակի իրավունքների խախտումները և հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ վերաբերմունքը:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման վերանայումը չի կարող անտեսել վերջին հակամարտության ազդեցությունը երեխաների իրավունքների և նրանց իրավունքների վրա: Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին Լեռնային Ղարաբաղի և ապա Հայաստանի դեմ լայնածավալ ռազմական հարձակումը, այդ թվում՝ շրջափակումը և տեղահանումը, ուղիղ ազդեցություն ունի ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և

երեխաների կոնկրետ իրավունքների, այդ թվում՝ առողջության, անվտանգության և կրթության իրավունքների իրագործման վրա:

Հակամարտությունը և տեղահանումը այսօր Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում սահմանված երեխայի իրավունքների իրագործման տեսանկյունից հիմնական մարտահրավերներն են: Սույնով կոչ ենք անում Կոմիտեին ճանաչել այս մարտահրավերը և տրամադրել ուղղորդում:

Կան հավաստի ապացույցներ առ այն, որ ադրբեջանական ուժերն իրականացրել են չտարբերակված հարձակումներ[1], որոնց արդյունքում մահացել են քաղաքացիական անձինք, այդ թվում՝ երեխաներ: Մասնավորապես 2020 թ. հոկտեմբերի 14-ին Ադրբեջանի զինված ուժերը ԱԹՍ–ով հարվածներ են հասցրել Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքին, ինչի հետևանքով 14-ամյա երեխա է վիրավորվել[2]: Պատերազմի հետևանքով իրենց բնակավայրերից տեղահանվել և Հայաստանում էր հաստատվել մոտ 90.000 մարդ, որից 88 տոկոսը՝ կանայք և երեխաներ[3]:

2022 թ. դեկտեմբերի 12-ից փակ էր Լեռնային Ղարաբաղը Հայաստանի և աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, ինչի հետևանքով Լեռնային Ղարաբաղի 120.000 բնակչությունը, այդ թվում 30.000 երեխա, շրջափակման մեջ էին: Ադրբեջանը միտումնավոր պարբերաբար խաթարել է Լեռնային Ղարաբաղի կենսական նշանակության ենթակառուցվածքների՝ գազամատակարարման, էլեկտրամատակարարման և կապի ու հաղորդակցության բնականոն աշխատանքը, ինչի հետևանքով բնակչությունը կանգնել է գոյության

[1] Տե՛ս Ադրբեջան. ապօրինի հարվածներ Լեռնային Ղարաբաղում, Հյուման Ռայթս Ուոչ, 11 դեկտեմբերի 2020թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.hrw.org/news/2020/12/11/azerbaijan-unlawful-strikes-nagorno-karabakh

[2] Տե՛ս Գեղարքունիքում ադրբեջանական ԱԹՍ–ի հարվածի հետևանքով երեխա է վիրավորվել, հոդված, 14.10.2020, Sputnik լրատվական գործակալություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://armeniasputnik.am/20201014/gexarquniqum-adrbejanakan-ats-i-harvatsi-hetevanqov-erekha-e-viravorvel-24906244.html

[3] Տե՛ս ՀՀ ԱԳՆ հայտարարությունը Փախստականների համաշխարհային օրվա կապակցությամբ, 20.06.2021, ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, հասանելիէ հետևյալ հղմամբ՝ https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/06/20/mfa_refugeesday/10997

պահպանման սպառնալիքի առջև[4]: Արգելվել է պարենի, դեղորայքի, բժշկական և հիգիենայի պարագաների մատակարարումը Լեռնային Ղարաբաղ: Պարենի բացակայության պատճառով 30.000 երեխա մատնվել է սովի: Մինչև 1 տարեկան ավելի քան 2 հազար երեխա գրեթե զրկված էր մանկական սնունդից[5]: Դադարեցվել էին դասերը դպրոցներում, փակվել էին մանկապարտեզները, աուտիզմ ունեցող երեխաները վառելիքի և համապատասխանաբար տրանսպորտի բացակայության պատճառով զրկվել են ցերեկային կենտրոն հաճախելու հնարավորությունից[6]: 2022 թ. դեկտեմբերի 21-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միջանկյալ միջոցներ է կիրառել՝ պարտավորեցնելով Ադրբեջանին «ձեռնարկել բոլոր՝ իրենց իրավասության տակ գտնվող միջոցները՝ ապահովելու «Լաչինի միջանցքով» Հայաստանում բժշկական օգնություն ստանալու կարիք ունեցող ծանր հիվանդ անձանց տեղաշարժը, ինչպես նաև ճանապարհին անապաստան մնացած կամ ապրուստի միջոցների կարիք ունեցող անձանց անվտանգ տեղաշարժը[7]:

Վտանգվել է երեխաների առողջության իրավունքը: Երեխաները պարբերաբար ստուգումներ էին անցնում և պահպանողական բժշկական սպասարկում ստանում Հայաստանի բժշկական կենտրոններում Լեռնային Ղարաբաղում բժշկական պատշաճ սպասարկման անհասանելիության պատճառով: Շրջափակման պատճառով նրանք զրկվել էին նաև այդ հնարավորությունից: Ավելի քան 200 երեխա չի վիրահատվել, ստիպված է եղել դիմանալու մշտական ու ահագնացող ցավերի շրջափակման պատճառով: Գրանցվել է դեպք, երբ վառելիքի բացակայության պատճառով աուտիզմ ունեցող

---

[4] Տե՛ս «Զեկույց Ադրբեջանի կողմից Արցախի (Լեռնային Ղարաբաղի) շրջափակման հետևանքով մարդու անհատական և հավաքական իրավունքների խախտումների մասին (վեց ամիս)», Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան,12.06.2023, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://artsakhombuds.am/hy/document/1028

[5] Տե՛ս Արցախում մինչև 1 տարեկան ավելի քան 2 հազար երեխա գրեթե զրկված է մանկական սնունդից. ԱՍՀ նախարարի տեղակալ, 28.07.2023, հոդված, Երկիր օրաթերթ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://yerkir.am/hy/article/2023/07/28/15833

[6] Տե՛ս «Мой ребенок не может спать от боли». В блокадном Арцахе нет лекарств, 02.09.2023, հոդված, Издание «Правмир», հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.pravmir.ru/moj-rebenok-ne-mozhet-spat-ot-boli-v-blokadnom-arczahe-net-lekarstv/?fbclid=IwAR38SeSxswK0ZY6iHJN4Drp8u4d-iJ3ZxwIQbU-tMrqmBusmzSpfGeP1tsg

[7] Տե՛ս Եվրոպական դատարանը որոշում է կիրառել միջանկյալ միջոցներ «Լաչինի միջանցքում», մամլո հաղորդագրություն, 21.12.2022թ., https://www.echr.coe.int › documents › d › echr › CP_Azerbaijan_ENG

երեխային երկու շաբաթ չեն կարողացել տեղափոխել հիվանդանոց և բացահայտել ոտքի ջարդված լինելը:

Բավարար սննդի, վառելիքի բացակայության պայմաններում Լեռնային Ղարաբաղում վաղաժամ ծնունդների և պտղի կորուստների թվի աճ է գրանցվել (շուրջ երեք անգամ[8]), արձանագրվել են չծնված երեխայի[9], մանկահասակ երեխաների մահվան դեպքեր[10]:

2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը 9 ամիս շրջափակումից հետո սանձազերծեց նոր լայնածավալ ագրեսիա Լեռնային Ղարաբաղի դեմ: Վերը նկարագրած իրավիճակին գումարվեց Լեռնային Ղարաբաղի որոշ քաղաքների ու գյուղերի շրջափակումը, քաղաքացիական բնակչության թիրախավորումը: Լեռնային Ղարաբաղի 30.000 երեխաները կրկին կանգնեցին հումանիտար աղետի առաջ: Ադրբեջանական զինծառայողները սպանել են 18 քաղաքացիական անձի, այդ թվում՝ 6 երեխա[11]: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի 2023 թ. սեպտեմբերի 20-ի հաղորդման համաձայն՝ հրետակոծությունների հետևանքով 200 վիրավորներից 13-ը երեխա էր:

Ադրբեջանի ագրեսիվ հարձակման հետևանքով բնակչությունը պարտադրված լքեց իր տները: 2023 թ. հոկտեմբերի 4-ի դրությամբ ՀՀ բռնի տեղահանվածների թիվը 100.250 անձ էր, որից շուրջ 29.000-ը երեխա:

---

[8] Տե՛ս Վերջին մեկ ամսում Արցախում հղիության վաղ շրջանում պտղի կորուստների ցուցանիշն աճել է գրեթե 3 անգամ. Գլխավոր բժիշկ, 20.07.2023, հոդված, Իրավաբան.net լրատվական կայք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://iravaban.net/433937.html

[9] Տե՛ս Արցախում չծնված երեխայի մահվան դեպք է գրանցվել՝ վառելիքի բացակայությամբ պայմանավորված շտապ օգնության անհասանելիության պատճառով, 16.08.2023, հոդված, «Արմենպրես» լրատվական գործակալություն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.armenpress.am/arm/news/1117458/

[10] Տե՛ս ԼՂ-ում 3 և 6-ամյա երեխաները մահացել են հումանիտար լուրջ իրավիճակի հետևանքով. Արարատ Միրզոյան, 13.07.2023, հոդված, Իրավաբան.net լրատվական կայք, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://iravaban.net/433019.html

[11] Տե՛ս Փաստահավաք աշխատանքների արդյունքներ, 26.09.2023, Թաթոյան հիմնադրամ, Իրավունքի և արդարության կենտրոն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://tatoyanfoundation.org/phastahavakh-ashxatankhneri-ardyunkhner/

Չնայած հակամարտությանը՝ երեխաների իրավունքների որոշ ոլորտներ ՀՀ-ի պատասխանատվության շրջանակում են, և ՀՀ-ն պետք է ապահովի ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հանդեպ հարգանքը:

Մեթոդանաբություն

Սույն զեկույցը տեղեկություն է ներկայացնում Հայաստանի փակ հաստատություններում երեխայի՝ խոշտանգումներից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից (վատ վերաբերմունքից) զերծ մնալու բացարձակ իրավունքի ապահովման հարցում պետության պարտավորության կատարման վերաբերյալ: Անդրադարձ է կատարվում նաև մարմնական պատիժների արգելման վիճակին, հաստատություններում խնամք ստացող երեխաների կենսապայմաններին, առողջության և կրթության իրավունքների ապահովմանը:

Զեկույցը կազմելիս հիմք են ընդունվել Կոմիտեի եզրափակիչ դիտարկումները[12], պետության ազգային զեկույցը: Տեղեկության աղբյուր են հանդիսացել Խնամքի հաստատություններում դիտորդական խմբի[13] կազմում մշտադիտարկման այցերը մանկատներ և ճգնաժամային կենտրոններ, որոնց ընթացքում անդամներն առանձնազրույցներ են ունեցել նաև երեխաների հետ, քաղաքականության փաստաթղթերը, պետական գերատեսչությունների տրամադրած պատասխանները, պաշտոնական վիճակագրությունը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հաղորդումները, զեկույցները, ԱՄՆ Պետքարտուղարության՝ Հայաստանին վերաբերող զեկույցները[14], ՅՈՒՆԻՍԵՖԻ

[12] Տե՛ս Հայաստանի համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ՝ ընդունված Կոմիտեի 63-րդ նիստի ընթացքում (27 մայիսի – 14 հունիսի 2013թ.), Երեխայի իրավունքների կոմիտե, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://digitallibrary.un.org/record/756273

[13] Խնամքի հաստատություններում դիտորդական խումբը մշտադիտարկման անկախ մարմին է, որը գործում է 2018 թվականից: Այն ձևավորվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 112-Ա/1 հրամանով

[14] Տե՛ս 2022 թ. Մարդու իրավունքների զեկույց, Պաշտոնական զեկույցներ, Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://am.usembassy.gov/hy/our-relationship-hy/official-reports-hy/

հրապարակումները և զեկույցները[15], Հյուման Ռայթս Ուոչի տարեկան զեկույցները[16], ՄԱԿ Երեխայի իրավունքների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեներին ներկայացրած դիտարկումները (Submission)[17], զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները:

Անկախ մշտադիտարկումը

2018 թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 112-Ա/1 հրամանով ձևավորվել և գործում է Խնամքի հաստատություններում դիտորդական խումբը: Հրամանով հաստատված կարգով խումբն անարգել մշտադիտարկման այցեր իրականացնելու իրավասություն ունի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող երեխաներին, տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ տրամադրող ՊՈԱԿ-ներ: Դիտորդական խումբը մշտադիտարկումն իրականացնում է խնամքի հաստատություններ այցելությունների և դրանց հիման վրա նախարարությանը հաշվետվությունների և հրապարակային առաջարկների ու զեկույցների ներկայացման ձևով:

Վերջին երեք տարվա ընթացքում Դիտորդական խումբն իրականացրել է ավելի քան 35 այցելություն, հանդիպում-քննարկումներ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատուների հետ:

Թեև Դիտորդական խմբի ձևավորումը ողջունելի է, այնուամենայնիվ մտահոգիչ է, որ պետական մարմինները կասկածի տակ են դնում և ժխտում Խնամքի հաստատություններում դիտորդական խմբի արձանագրած փաստերը:

---

[15] Տե՛ս https://www.unicef.org/armenia/
[16] Տե՛ս https://www.hrw.org/world-report/2023/country-chapters/armenia
[17] Տե՛ս https://www.hrw.org/sites/default/files/media_2022/12/Human%20Rights%20Watch%20Submission%20to%20the%20Committee%20on%20the%20Rights%20of%20the%20Child%20Review%20of%20Azerbaijan.pdf; https://www.hrw.org/news/2022/07/07/human-rights-watch-submission-committee-rights-persons-disabilities-draft

Ընդհանուր սկզբունքներ (Կոնվենցիայի հոդված 2, 3, 6 և 12)

Խտրականության դեմ պայքար

Հաստատություններում արմատացած է **հաշմանդամության կարծրատիպային մոտեցումը**: Անձնակազմի բառապաշարը լի է խտրականություն, բացառում և պիտակավորում պարունակող բառերով: Կիրառվում են «փողոցային», «հիմար պահվածք», «մեջներից նորմալ», «ինվալիդ», «անհասկացող» և այլ խտրական բառեր աշխատակիցների կողմից երեխաների մասին խոսելիս:

Ըստ Խնամքի հաստատություններում դիտորդական խմբի տվյալների՝ դայակների և դաստիարակների կողմից խարանող վերաբերմունք է առկա մտավոր խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ: Օրինակ՝ մանկատներից մեկում երեխաներից նշել են, որ աշխատողներն ասում են՝ «հոգեբուժարանի հիվանդ է, թուղթ ունի»: Երեխաները նույնպես օգտագործում են «ինքը գիժ ա», «կտցրած ա», «շեղված ա», «իրան մի լսեք» խտրական արտահայտություններ:

Մանկատներում աշխատակիցները չունեն անհրաժեշտ հմտություններ՝ բացառելու երեխաների հանդեպ խտրական վերաբերմունքը, այդ թվում՝ այլ առողջական խնդիրների պատճառով: Մանկատներից մեկում մարդու իմունային անբավարարության վիրուս ունեցող դեռահասին մեծ դժկամությամբ են ընդունել, իսկ աշխատակազմը նրան դիպչելիս կրել է ձեռնոցներ, երեխաներին հորդորել են հեռու մնալ, առանձնացրել սպասքը:

Առկա է վերաբերմունքի տարբերություն նաև պայմանավորված **գենդերային խտրականությամբ**: Աշխատակիցներն աղջիկ երեխաներին ներգրավում են մաքրության, անկողնային սպիտակեղենը փոխելու աշխատանքներում՝ ներկայացնելով դա որպես նրանց գենդերով պայմանավորված դաստիարակության անհրաժեշտ բաղադրիչ, նախապատրաստում ընտանեկան կյանքին:

ՀՀ կառավարությունը 2021 թ. հոկտեմբերին հանդես եկավ օրենսդրական նախաձեռնությամբ, որով բնակարանի գնման վկայագիր ստանալու հնարավորությունից զրկվում են «ինքնասպասարկման ապահովման ունակություններ չունեցող շահառուները»[18]: Մի խումբ հասարակական կազմակերպություններ հանդես եկան նախագծի խտրական և Հայաստանի կոնվենցիոն պարտավորություններին հակասող լինելու հայտարարությամբ[19], սակայն այն մնաց անպատասխան: Ավելին, որոշումն ընդունվեց առանց հանրային քննարկման:

Առաջարկություններ

- Ապահովել հաշմանդամություն ունեցող երեխաների՝ օրենսդրական մակարդակում և պրակտիկայում խտրականությունից պաշտպանության իրավունքը
- Իրականացնել հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումներ՝ բացառելու գենդերով, հաշմանդամության կամ այլ ցանկացած հիմքով խտրականությունը

Բռնություն երեխաների նկատմամբ (Հոդված 19, 37(ա) և 39)

Վատ վերաբերմունք և մարմնական պատիժ

Երեխաներին շուրջօրյա խնամքի ծառայություններ մատուցում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող 5 մանկատուն և 3 երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն[20]:

[18] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում 1774 - Ն առ 28 հոկտեմբերի 2021 Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.e-gov.am/gov-decrees/item/37169/?fbclid=IwAR2v57CJT8L4_FqmrUcYK70Et-AcHrQ9hiBLrLzuq8jUy0naJGfWk9Y0uOw

[19] Տե՛ս Համատեղ հայտարարություն մանկատան՝ հաշմանդամություն ունեցող շրջանավարտների նկատմամբ խտրական որոշման մասին, 15.11.2021, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://dra.am/hy/news/համատեղ-հայտարարություն-մանկատան-հաշմանդամություն-ունեցող-շրջանավարտների-նկատմամբ-խտրական-որոշման-մասին-2

[20] «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ, «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ, «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, «Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ, «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ, «Երևանի «Մանկան տուն»

Դիտորդական խմբի մշտադիտարկման արդյունքները փաստում են, որ հաստատություններում շահագործման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման արդյունավետ համակարգ առկա չէ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 27.01.2017 թ. թիվ 7-Ա/1 և ՀՀ կրթության և գիտության նախարարի 28.04.2017 թ. թիվ 464-Ա/2 համատեղ հրամանով հաստատվել են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգը և բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյանի ձևը: Այնուամենայնիվ, նման մատյան ոչ բոլոր հաստատություններն են վարում:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրով նախատեսվեց Երեխաների խնամքի հաստատություններում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցների ներդրում[21]: Համաձայն ռազմավարության իրականացման վերաբերյալ 2020 թ. հաշվետվության՝ երեխաների խնամք իրականացնող բոլոր կենտրոններում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու նպատակով ներդրվել են անանուն արկղեր: Կենտրոններում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թեժ գծի (114) մասին տեղեկատվությունը փակցվել է տեսանելի վայրերում[22]: Խնամքի հաստատություններում դիտորդական խմբի մշտադիտարկումները փաստում են, որ անանուն արկղերը կարող են հասանելի չլինել երեխաներին: Օրինակ՝ հաստատություններից մեկում արկղը տեղադրվել էր

ՊՈԱԿ, «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ

[21] Տե՛ս Մարդու իրավունքների ազգային ռազմավարության հարթակ, Գործողություն 18.4, հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.e-rights.am/?app=AppEvent&page=default&event_id=79&event_tab=report

[22] Տե՛ս նույն տեղում

անմիջապես մուտքի մոտ, որտեղ ոչ բոլոր երեխաները կարող են հասանելիություն ունենալ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2023 թ. հոկտեմբերի 10-ի տրամադրած տեղեկության համաձայն՝ նախարարության «114» թեժ գծին 2022-2023 թթ. ընթացքում երեխաների խնամք իրականացնող ՊՈԱԿ-ներից բռնության վերաբերյալ ահազանգեր չեն ստացվել:

Խնամքի հաստատություններում դիտորդական խմբի տվյալների համաձայն՝ վերջինս ահազանգեր է ստանում հաստատություններում ֆիզիկական և սեռական բռնության, այդ թվում պահնորդի կողմից, սաների ինքնավնասման փորձերի վերաբերյալ: Խմբի անդամներն ականատես են եղել պահակի կողմից երեխաներից մեկի թևից բռնելու ու բարձր բղավելու տեսարանին:

Արձանագրվել է նաև լարվածություն երեխաների միջև: Ըստ խնամքի հաստատություններում դիտորդական խմբի՝ երեխաներից ոմանք ակնհայտ վախեցած պահվածք են ցուցաբերել հեղինակություն ունեցող երեխաների հետ շփման ընթացքում:

Հաստատություններից մեկի աշխատակիցների և սաների հետ զրույցներից հաստատվել է աղջիկների շրջանում ինքնավնասման կամ դրան նմանվող փորձերի տարածվածության վերաբերյալ ահազանգը: Երեխաներից մեկն ինքնասպանության և փախուստի փորձեր է կատարել, որի մասին Կենտրոնում ոչ մեկը, ըստ Խնամքի հաստատություններում դիտորդական խմբին այս մասին հայտնող երեխայի, տեղյակ չէ: Մեկ անգամ փորձել է կախվել, մեկ այլ անգամ՝ պատուհանից նետվել: Երեխան տեղեկացրել է, որ եթե դաստիարակներն իմանան, դա շատ վատ հետևանքներ կունենա (օրինակ՝ տվյալ երեխան կպատժվի):

Հաստատությունների աշխատակազմը հաճախ մարմնական պատիժ է կիրառում: Մտահոգիչ է նաև այն, որ մարմնական պատիժը և վատ վերաբերմունքն ընկալվում և օգտագործվում են որպես դաստիարակության մեթոդներ:

- հարվածում են գլխին, գլուխը պատին (հաստատությունում խնամք ստացող երեխա)

- զրկում են հաց ուտելու հնարավորությունից (հաստատությունում խնամք ստացող երեխա)
- պարտադրում են դասավորել պահարանը ու եթե դասավորված պահարանն իրենց չի գոհացնում, նորից են պարտադրում (հաստատության աշխատակից)
- սպառնում են երեխաներին ավելի վատ պայմաններով խնամքի հաստատություն տեղափոխմամբ կամ բակում խաղալուց զրկելով:

Մտահոգիչ են սեռական բռնության դեպքերը: Գավառի մանկատան 18-ամյա սանը 2022 թ. հոկտեմբերից մինչև 2023-ի մարտ սեռական հարաբերություն է ունեցել նույն մանկատան անչափահաս աղջկա հետ[23]: Մանկատներից մեկում տղաներից մեկի խոսքով՝ ավելի մեծ տարիքի տղաներից մեկը սեռական բռնության է ենթարկել ավելի փոքր տարիքի մտավոր խնդիր ունեցող երեխայի, ինչին ինքն ականատես չի եղել, պարզապես իրեն պատմել են: Վերջինս նաև հետաքրքրվել է, թե ինչ կարող է պատահել սեռական բռնությունից հետո, արդյոք այն կբերի սեռափոխության, հոգեկան առողջության խնդիրների և այլն:

Արժանապատվությունը նվաստացնող է **հիգիենայի կազմակերպումը**: Հաստատություններից մեկում աղջիկները նշել են, որ լողանում են շաբաթական 1-2 անգամ՝ 10-15 րոպե տևողությամբ: Սա մեծապես պայմանավորված է հաստատության ֆինանսական ոչ բավարար ապահովվածությամբ. ջրի վարձավճարի խնդիր կառաջանա, եթե երեխաներն ավելի հաճախ և երկար լողանան: Հիգիենայի պարագաները բավարար քանակի ու պատշաճ որակի չեն: Հաստատություններից մեկում ուսումնասիրության արդյունքները պարզել են, որ օրական մեկ միջադիր և ընդհանուր օգտագործման մեկ սափրիչ է տրամադրվում: Մեկ այլ հաստատությունում 10 հոգու համար նախատեսված է եղել լոգանքի 3 ճիլոպ: Նաև զուգարանում թղթի պակասի խնդիր է արձանագրվել:

[23] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանությունը խնամքի հաստատություններում, 12.07.2023, հոդված, EVN Report անկախ, շահույթ չհետապնդող հարթակ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://evnreport.com/arm/law-society-arm/human-rights-in-state-care-institutions/

Բռնությունների նման պատկերի համատեքստում խիստ մտահոգիչ է պատկան մարմինների մոտեցումները: Չնայած Կոմիտեի հորդորին՝ քննելու բռնության անհատական դեպքերը, հայտնաբերելու և պատժելու մեղավորներին՝ Դիտորդական խմբի կողմից հայտնաբերված բռնության դեպքերը պատշաճ արձագանք չեն ստանում ո՛չ իրավապահ մարմինների և ո՛չ էլ պետական բարձրագույն մարմինների կողմից[24]: Մասնավորապես ՀՀ քննչական կոմիտեն և դատախազությունը բռնության վերաբերյալ ահազանգերից որևէ մեկով քրեական վարույթ հարուցելու հիմքեր չեն գտել:

Իրազեկվածության ցածր մակարդակի և ընկալման առանձնահատկություններով պայմանավորված՝ հաստատության աշխատակիցներն իրենց գործողությունները և վերաբերմունքը չեն համարում բռնություն, այլ դաստիարակության արդյունավետ մեթոդ: Առկա է հաստատությունների աշխատակիցների շարունակական վերապատրաստման և սուպերվիզիայի անհրաժեշտություն՝ ապահովելու համար երեխաների նկատմամբ հարգանքն ու արժանապատիվ կեցությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում իրավասու մարմիններին հաղորդում ներկայացնելը:

Երեխաների, այդ թվում հաստատություններում երեխաների նկատմամբ բռնության համատեքստում խնդրահարույց է մինչ օրս **մարմնական պատժի արգելքի** օրենսդրական ամրագրման բացակայությունը: Հայաստանը մարմնական պատիժն արգելելու պարտավորություն է ստանձնել 2010 թ.-ից[25]: Մարդու իրավունքների պաշտպանության 2020-2022 թթ. ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված է գործողություն, որով նախատեսվում էր մինչև 2021 թ. առաջին կիսամյակն օրենսդրորեն արգելել երեխայի նկատմամբ մարմնական պատիժները (Գործողություն 25)[26]: Գործողության ակնկալվող անմիջական արդյունքը պետք է լինի օրենքների նախագծերի ուղարկումը

[24] Տե՛ս CRC/C/ARM/CO/3-4, հուլիս 2013թ., պարբ. 24, 25
[25] Տե՛ս Երեխաների մարմնական պատիժը Հայաստանում, End Corporal Punishment հարթակ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://endcorporalpunishment.org/reports-on-every-state-and-territory/armenia-hy/
[26] Տե՛ս Կառավարության նիստի օրակարգ, 2019 թ. դեկտեմբերի 20, հարց 54, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.e-gov.am/sessions/archive/2019/12/26/

Ազգային ժողով: Վերջինիս կատարման ժամկետը հետաձգվեց 2022 թ. առաջին կիսամյակ: Մինչ օրս, սակայն, համաձայն ՄԻՊ ռազմավարության կայքում ՀՀ Արդարադատության նախարարության հրապարակած հաշվետվության, իրականացվել է միայն Երեխայի նկատմամբ մարմնական պատիժներն արգելող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակմանն ուղղված հետազոտությունը[27]:

Համաձայն Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի 2015-2016 թթ. հետազոտության՝ 1-14 տարեկան տասը երեխաներից յոթը հետազոտությանը նախորդող 30 օրերի ընթացքում ենթարկվել են հոգեբանական կամ ֆիզիկական որևէ պատժի: Երեխաների 65 %-ը ենթարկվել է հոգեբանական ագրեսիայի, 38 %-ը ֆիզիկական պատժի որևէ տեսակի, 68.9 տոկոսի նկատմամբ կիրառվել է դաստիարակության որևէ բռնի մեթոդ[28]: Նշենք, որ, օրինակ, 2010 թ. դաստիարակության որևէ բռնի մեթոդ է կիրառվել 1-14 տարեկան երեխաների 69.6 տոկոսի նկատմամբ: Այսինքն, 5 տարիների ընթացքում վիճակը չի բարելավվել:

Առաջարկություններ

- Իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ՝ բացառելու հաստատություններում երեխաների հանդեպ և նրանց միջև հնարավոր բռնության, այդ թվում սեռական բռնության դեպքերը, պատժիչ դաստիարակչական մեթոդների կիրառումը
- Ապահովել բռնության հնարավոր և հաստատված դեպքերի, ինքնասպանությունների, ինքնավնասումների և դրանց փորձերի պատշաճ արձանագրման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների ներկայացման ընթացակարգ
- Ապահովել հաստատություններում երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության հնարավոր և/կամ հաստատված դեպքերի գրանցամատյանների

[27] Տե՛ս Մարդու իրավունքների ազգային ռազմավարության հարթակ, Գործողություն 25, հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.e-rights.am/?app=AppEvent&page=default&event_id=89&event_tab=report

[28] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի 2015-2016 թթ. հետազոտություն, էջ 34-35, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://armstat.am/file/article/adhs-2015-armenian.pdf

պատշաճ վարումը՝ սահմանելով պատասխանատվություն մատյանի բացակայության և/կամ դեպքերի ոչ պատշաճ արձանագրման համար

- Երաշխավորել հաստատություններում երեխաների՝ իրենց իրավունքների խախտման, բռնության դեպքերի վերաբերյալ ահազանգելու հնարավորություն՝ ապահովելով հեռախոսների և արկղերի հասանելիությունը
- Ապահովել հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ պայմաններ այդ թվում՝ անհրաժեշտ քանակի և պատշաճ որակի հիգիենայի պարագաներ
- Իրականացնել շարունակական վերապատրաստումներ հաստատությունների աշխատակիցների համար՝ բռնության դեպքերի, ինքնասպանությունների, ինքնավնասումների և դրանց փորձերի, կրկնությունների կանխարգելման նպատակով
- Բռնության ամեն մի անհատական դեպքով իրականացնել անհապաղ, արդյունավետ քննություն և պատասխանատվության ենթարկել բռնություն կատարողներին
- Ընդունել երեխայի նկատմամբ բոլոր միջավայրերում, այդ թվում՝ խնամքի հաստատություններում մարմնական պատիժները արգելող օրենսդրական փոփոխությունները

Ընտանեկան միջավայր և այլընտրանքային խնամք (Կոնվենցիայի հոդված 5, 18 (պարբ. 1-2), 9-11, 19-21, 25, 27 (պարբ. 4) և 39)

Ընտանեկան միջավայրից զրկված երեխաներ

Պետությունը շարունակում է ֆինանսական միջոցներ հատկացնել մանկատների պահպանման և հզորացման համար՝ ընտանիքի և համայնքահենք խնամքի և ծառայությունների համար ներդրումների փոխարեն, ինչը խորհուրդ է տրվում ՄԱԿ-ի այլընտրանքային խնամքի ուղեցույցում: Ուղեցույցում ընդգծվում է՝ «հաստատություններում տրամադրվող խնամքի այլընտրանքները պետք է մշակվեն ընդհանուր ապաինստիտուցիոնալացման ռազմավարության

համատեքստում»[29]: Այդ խնդիրն արձանագրված է նաև Հյուման Ռայթս Ուոչի՝ Մարդու իրավունքների ամենամյա զեկույցում[30]: 2022 թ. հոկտեմբերին Հայաստանում Ճապոնիայի դեսպանության և «Քեզ համար» հասարակական բարեգործական կազմակերպության միջև 99,7 հազար դոլարի դրամաշնորհային ծրագրի պայմանագիր է ստորագրվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող «Խարբերդի մասնագիտացված մանկատան» պայմանների բարելավման նպատակով[31]:

Խնդրահարույց է երեխաների՝ խնամքի հաստատություն ընդունելու մոտեցումները: Ըստ Խնամքի հաստատություններում դիտորդական խմբի տրամադրած տեղեկությունների՝ երեխաները ճգնաժամային կենտրոններ մուտք գործելիս չեն ստանում բավարար և իրենց հասկանալի լեզվով տեղեկություններ տվյալ կենտրոնում իրենց կեցության վերաբերյալ, ինչը նվազեցնում է հետագա աշխատանքների արդյունավետությունը:

Արձանագրվել է դեպք, երբ Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն առանց բավարար հիմքերի ընդունվել է մի տղա և այնտեղ գտնվել 3 օր: Երեխային կենտրոն բերել է մայրը, որպեսզի հարթի տվյալ երեխայի՝ մեկ այլ երեխայի հետ տեղի ունեցածը. «Էդ տղան մի երեխայի շալվար է իջացրել, ծնողը տեսել է: Սրան [Կենտրոն բերված տղային] որպեսզի փախցնեն, բերել են ստեղ»:

Մեկ այլ դեպքում ծնողի ոչ կոկիկ լինելը և այն փաստը, որ ծնողը վարձակալած տանն է ապրել, խոչընդոտ են եղել երեխաների հետ վերամիավորմանը: Խնդիրը լուծվել է, սակայն երեխաները վատ հուզական վիճակում որոշ ժամանակ մնացել են ճգնաժամային կենտրոնում, քանի որ նրանց ասել են, որ հնարավոր է՝ տեղափոխվեն մեկ այլ մարզի մանկատուն:

---

[29] Տե՛ս ՄԱԿ պաշտոնական փաստաթղթերի համակարգ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N09/470/35/PDF/N0947035.pdf?OpenElement

[30] Տե՛ս Հայաստան, 2022թ. Միջոցառումները, Զեկույց, Հյուման Ռայթս Ուոչ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.hrw.org/hy/world-report/2023/country-chapters/383668

[31] Տե՛ս Խարբերդի մասնագիտացված մանկատան պայմանները կբարելավվեն.ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանության հետ դրամաշնորհային պայմանագիր է ստորագրվել, 11.10.2023, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.mlsa.am/?p=37575&fbclid=IwAR1UbiWYvSO8PEyPJW9_XsVyI2MTb_GaA_Ll_rZ4C-gWzW0jbkY8B1YCzZs

Խնամքի հաստատություններում դիտորդական խումբն արձանագրել է նաև դեպք, երբ միայն լոգանքի ընթացքում են ճգնաժամային կենտրոնի աշխատակիցները պարզել, որ ընդունված երկու երեխաները արական սեռի են: Երեխաների մազերը ամբողջությամբ սափրված է եղել և նրանց տեղափոխող ոստիկանները նշել են, որ երեխաներից մեկը աղջիկ է, մյուսը՝ տղա: Երեխաները թե՛ մինչև սեռի նույնականացումը, և թե՛ դրանից հետո բնակեցվել են աղջիկների համար նախատեսված մասնաբաժնում, քանի որ տղաների մասնաբաժնում ազատ տեղ չի եղել:

Առաջարկություններ

- Ապահովել ֆինանսական ռեսուրսների ներդրումը երեխաների խնամքի համայնքային ծառայություններում՝ ապաինստիտուցիոնալացման ռազմավարության շրջանակում
- Երաշխավորել երեխաների ինստիտուցիանալացումը որպես վերջին հնարավոր տարբերակ կիրառելը՝ բացառելու առանց բավարար հիմքերի կամ ապօրինի կերպով հաստատություններում պահելու ռիսկերը

Հաշմանդամություն, առողջություն և բարեկեցություն (հոդվածներ. 6, 18 (պարագրաֆ 3), 23, 24, 26, 27 (պարբերություններ 1-3)

Հաշմանդամություն ունեցող երեխաներ

Երեխաների՝ հաստատություն տեղավորվելու հիմնական պատճառները երեխայի հաշմանդամությունը և ընտանիքի սոցիալական անապահովությունն են:

Համայնքներում բացակայում են ծառայությունները, որոնք կաջակցեն ընտանիքներին հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքի հարցում: Մինչդեռ դա առանցքային նշանակություն ունի՝ կանխելու հաշմանդամություն ունեցող երեխաների ինստիտուցիոնալացումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ պետական ենթակայության մանկատներում խնամք է ստանում մոտ 590 երեխա և չափահաս (տես Գծապատկեր 1):



Հաշմանդամություն ունեցող անձինք բոլոր տարիներին կազմում են խնամք ստացողների գերակշիռ մասը: Եվ հաշմանդամություն ունեցող երեխաներն ու 18 տարին լրացած անձինք առավել խոցելի են, քանի որ վերջիններիս դեպքում խնամքի այլընտրանքը գրեթե բացակայում է. հաշմանդամություն ունեցող երեխաները չեն որդեգրվում, խնամատար ընտանիք չեն ընդունվում: Ավելին, չստանալով անկախ կյանքի համար անհրաժեշտ հմտություններ և ռեսուրսներ՝ չափահաս դառնալուց հետո էլ շարունակում են ապրել մանկատանը կամ տեղափոխվում են չափահաս անձանց համար նախատեսված խնամքի հաստատություններ: Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2023 թ. հոկտեմբերի 10-ին տրամադրած տեղեկության՝ ՀՀ պետական ենթակայության հինգ մանկատներում խնամք ստացող 18 տարին լրացած 210 անձանցից բոլորն ունեն հաշմանդամություն: Ընդ որում Խարբերդի մասնագիտացված մանկատանը 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձինք 246 խնամք ստացողների մոտ 76 տոկոսն են կազմում:

Հյուման Ռայթս Ուոչը նույնպես ընդգծել է, որ չնայած ՀՀ կառավարությունը պարտավորվել է երեխաներին դուրս բերել առնվազն մանկատներից, հատուկ,

գիշերօթիկ դպրոցներից և վերափոխել դրանք համայնքահենք ծառայություններ մատուցող ոչ բնակելի կենտրոնների՝ ծրագրեր չկան բացառապես հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված երեք մանկատները վերափոխելու ուղղությամբ[32]:

Առաջարկություններ

- Բացառել երեխաների մուտքը հաստատություն ընտանիքի սոցիալական անապահովության հիմքով՝ իրականացնելով ի թիվս այլնի հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքների սոցիալական աջակցման ծրագրեր
- Ապահովել մանկատներում խնամք ստացող երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար այլընտրանքային խնամքը, այսինքն՝ առաջարկել այլընտրանքներ մանկատներին
- Ապահովել, որ երեխայի պաշտպանության համակարգը բավարար թվով մասնագետներ ունենա (ներառյալ հոգեբան, սոցիալական աշխատող)՝ ապահովելով նրանց շարունակական վերապատրաստումը՝ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ վերաբերմունքի, նրանց հետ հաղորդակցվելու հմտությունների զարգացման նպատակով

Առողջապահություն և առողջապահական ծառայություններ

Խնամքի հաստատություններում դիտորդական խմբի տեղեկությունների համաձայն՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման համակարգը բավարար ճկուն չէ, չի արձագանքում այն երեխաների և չափահասների կարիքներին, ովքեր ունեն երկրորդային կամ քիչ հանդիպող հիվանդություններ:

Ոչ բոլոր հաստատություններում են պահպանվում դեղերի պահման կանոնները: Հաստատություններից մեկում հայտնաբերվել է ժամկետանց դեղ:

[32] Տե՛ս «Երբ ես կկարողանամ վերադառնալ տուն», զեկույց, էջ 22, 22.02.2017, Հյուման Ռայթս Ուոչ, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.hrw.org/sites/default/files/report_pdf/armenia0217arm_web_0_1.pdf

Հաստատություններում խախտվում է խնամք ստացող երեխաների սեռական և վերարտադրողական առողջության պահպանման իրավունքը: Նրանք չեն ստանում մեկուսի և բարյացակամ խորհրդատվություն սեռական հասունացման, սեռական առողջության հարցերի վերաբերյալ: Ընդ որում հաստատություններից մեկում որոշ երեխաներ սեռական կյանքով են ապրում, սակայն սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ անհրաժեշտ և պատշաճ չեն իրազեկվում:

Հաստատություններում առկա է նաև անձնական հիգիենայի և տարածքի պահպանման, ՄԻԱՎ-ի կանխարգելման թեմաների վերաբերյալ վերապատրաստման կարիք ինչպես անձնակազմի, այնպես էլ երեխաների շրջանում: Երեխաները սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ ճիշտ տեղեկատվության հասանելիություն չունեն: Օրինակ՝ երեխաներին տեղեկացնում են, որ դաշտանի ժամանակ լողանալ չի կարելի, վտանգավոր է տաք ջրի տակ երկար մնալը և իրենք միայն գլուխներն են լվանում:

Խնամքի հաստատություններում դիտորդական խմբին այցի ընթացքում աղջիկներից մեկը տեղեկացրել է, որ առաջին դաշտանի ժամանակ շատ է վախեցել, այդ մասին փորձել է հարցեր տալ հոգեբանին: Միջադիրի օգտագործումը սովորեցրել են հաստատության այլ աղջիկներ: Իսկ հաստատության աշխատակիցները, որոնք պատասխանատու են անձնական հիգիենայի մասին երեխաներին տեղեկացնելու համար, խուսափում են դաշտան եզրույթից, փոխարենը կիրառում՝ «ով խնդիր ունի», «հիվանդացել է»:

Առաջարկություն

- Ապահովել հաստատությունների աշխատողների՝ դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության պահպանման իրավունքի վերաբերյալ իրազեկվածությունը, երաշխավորել սեռական հասունացման և սեռական առողջության վերաբերյալ անհատականացված աշխատանքը երեխաների հետ

Կենսամակարդակ

Երեխաների խնամքի որոշ հաստատություններում երեխաների տարիքային տարբերությունը, վարքային տարբեր դրսևորումներն (օրինակ՝ «հեղինակություն» ունեցող որոշ երեխաներ վերահսկում են իրավիճակը և երբեմն ճնշում ավելի փոքր երեխաներին) ու առողջական, հիգիենայի պայմանները և ոչ բավարար տարածքն անհնար են դարձնում արժանապատիվ կեցության ապահովումը:

Համաձայն Խնամքի հաստատություններում դիտորդական խմբի զեկույցների՝ աղջիկների և տղաների համար հատկացված են առանձին տարածքներ, սակայն բոլոր տարիքի նույն սեռի երեխաները նույն հարկի միևնույն մասնաբաժնում են: Այս հանգամանքը լուրջ խոչընդոտ է երեխաների համակեցության կանոնների պահպանման, քնի կամ հանգստի կազմակերպման հարցում, կարող է հանգեցնել բռնության: Օրինակ՝ տարիքով մեծ տղաները փոքրերին կարող են «խփել», երբ վերջիններս աղմկում և խանգարում են նրանց:

Որոշ հաստատություններում ննջարանային պայմանները չեն համապատասխանում սահմանված չափորոշիչներին՝ մահճակալները հնարավորինս խիտ են կահավորված:

Բոլոր երեխաներն ապահովված չեն անհատական դարակներով, ըստ որոշ երեխաների՝ մահճակալներն անհարմար են: Կահույքի և դրանցում հագուստի և կոշիկների պահպանման համար պայմանները ևս ոչ բոլոր հաստատություններում են բավարար:

Հաստատություններից մեկում ճաշարանի մակերեսը փոքր է (չնայած դրան՝ ապահովվում է բավարար քանակով սնունդ), այնտեղ առկա սեղան-աթոռների թիվը պակաս է սաների թվից, ինչի պատճառով նրանք սնվում են հերթով:

Որոշ հաստատություններում չի ապահովվում մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը ու անձնական տարածքի նկատմամբ հարգանքը: Խնամքի հաստատություններում դիտորդական խումբն արձանագրել է, որ աղջիկներից մեկի լոգանքի ընթացքում դուռը կողպած չի եղել, քանի որ այն չի աշխատել: Նույն

հաստատության աշխատողներից նշել են, որ երեխաներին պարտադիր աջակցում են լողանալիս, անկախ նրանից՝ նրանք աջակցության կարիք ունեն, թե ոչ: Նրանցից մեկը տեղեկացրել է, որ նույնիսկ եթե աղջիկը մեծ է, կարող է ինքնուրույն լողանալ ու չի ցանկանում, որ իրեն օգնեն, միևնույն է, օգնում են: Նաև աշխատակիցները ննջասենյակ մտնելիս որպես կանոն դուռը չեն թակում:

Ոչ բոլոր հաստատություններում է ապահովվում նաև ձմռանը պատշաճ ջերմաստիճանը, այդ թվում ննջասենյակներում ու լոգարանում:

Առաջարկություն

- Ապահովել երեխաների (անկախ սեռից, սոցիալական ծագումից, ծննդից, հաշմանդամությունից) մարդու իրավունքների և արժանապատվության վրա հիմնված խնամքը

Կրթություն, ժամանց և մշակութային գործունեություն (Կոնվենցիայի հոդված 28, 29 և 31)

Հանրակրթական դպրոցներում խախտվում է մանկատան և ճգնաժամային կենտրոնների երեխաների արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը, ինչը բացասաբար է ազդում երեխաների կրթության իրավունքի վրա:

Պետական հոգածության հաստատություններում խնամք ստացող երեխաներին պիտակավորում են, ծաղրում և բուլինգի են ենթարկում՝ ասելով մանկատան երեխա կամ որբ: Երեխաները դպրոցում դժվար են ադապտացվում, իսկ հաստատությունների և դպրոցների միջև համագործակցությունը արդյունավետ չէ:

Նման պայմաններում առավել խոցելի են հաշմանդամություն ունեցող երեխաները, որոնք պիտակավորվում են ոչ միայն խնամքի հաստատությունում գտնվելու, այլ նաև հաշմանդամությամբ պայմանավորված:

Առաջարկություն

- Բացառել երեխաների կրթությանը խոչընդոտող բոլոր գործոնները, այդ թվում՝ ջանքեր գործադրել մանկատներում և ճգնաժամային կենտրոններում խնամք ստացող երեխաների նկատմամբ վերաբերմունքի փոփոխության նպատակով և նպաստել խտրականության հնարավոր դեպքերին իրավական գնահատական տալուն